





տարբերութեան, որը արտայայտուի է մեր հասարակութեան կողմից դէպի տաճկահայի այս ինչ, այն ինչ հրաւերը, ձեռնարկութիւնը, ազգայնաբանական երբեք չհասնող մեր կողմերը այդպիսիները ոչնչով չեն կարողանում թուլացնել տարածված հակասալարմունքը, եթէ միայն աւելի ևս չեն հաստատում նրանք... Ահա ինչու եթէ իմ անցեալ համակի մէջ տեղի տուի մի քանի կծու ձեռքերի պոլսեցիները վերաբերմամբ, այդ արեցի ակամայ, գտնվելով միայն ընդհանուր տրամադրութեան տակ:

Բայց եթէ վեր առնել ամեն ինչ ազատ կերպով, առանց կասկածի, նախապաշարմունքի, անպայման հաւատով դէպի Ա. Պոլսի ազգային քաղաքականութեան ղեկավարները, նոցա ընդունակութիւնը, խոհեմութիւնը, հեռատեսութիւնը, չընթացեցողութիւնը, կշռադատութիւնը, փորձը և խորամտութիւնը, եթէ ուշքի առնել ևս նոցա չընթացող շատ ծանր որակութիւնները և խոչընդոտները, չը նայելով, ասում եմ, այսպիսի մի անաչառ հայեցողութեամբ, մի այսպիսի անկախ տեսակետին, դարձեալ ինքն ըստ ինքեան հարց է առաջ գալիս. դիցուք թէ տաճկահայերի չնորհիւ հայոց գործը de jure ստացաւ մի ընդհանուր և բարձրագույն նշանակութիւն, դիցուք թէ նոցա խոստացուեցաւ վաղ թէ անագան մի բարեփոխում գործիւն, հանգստութիւն, համեմատական բարեփոխումներ, բարօրութիւն, ինքնուրոյնութիւն գոյն է և շատ ուրիշ բաներ, դիցուք թէ դէպի օսմանեան պետութիւնը հայերին տրվեց մի վաւերացրած քաղաքական իրաւունք բողոքելու, պահանջելու, գանդառովելու, յայտնելու իրանց ցաւը երաշխաւոր Եւրոպային, բայց այդ ամենից ինչ օգուտ Հայաստանում գտնվող հայերին, որոնց չնչիւրեւ ձեռնամուխ է լինում Ստամբուլի կառավարութիւնը երբ ցանկաւում է, ինչպէս ուզում է և ինչ կերպ յարմար է դառնում, ինչ օգուտ այդ ամենից արդեօք, երբ Հայաստանի քրիստոնեաները գտնվելով մինչև Ռեյ-լինի 61 յօդուածը մոռացութեան և զանցառութեան մէջ, հանգիստ էին գտնել տաճկի կառավարութեան զանազան դաւադրութիւնների կողմից, իսկ այժմ բանալով տեղութեան աչքը, այդ չարաբաղդ պայմանակէտը առիթ է տալիս արմատախիլ անելու մնացած վերջի հայերին իրանց հայրենիքից, այժմ տաճկի տեղութիւնը էլ հանաք չէ անում հայերի հետ—մի կողմից ջարդել է տալիս նրանց քրեական ձեռքով, միւս կողմից այս վերջիններին օգնութիւն է ուղարկում աւելի ևս կատաղածներին, աւելի ևս զլարածներին, աւելի ևս բազմատուրքներին. նա գաղթել է տալիս Հայաստանի կենտրոնը Եւրոպայից մահմետական պալատներին և ալթանայիններին, իսկ Կովկասից հրաւիրում է երկու հարիւր հազար աշխարհիկներին, որոնք շտապում են Հայաստան մինչև վերջի մարդը ղլխաւորված Պիոթի կատարելագործված հրացաններով: Սոցա-նից որ ազգութիւնը պիտի հասկանայ այդպիսի հայի

լեզուն, որ կարողանայ չարժիք նորա աղետաբեր պաղատանքից և խնայել նորա պոկուր և որոնց կենսաբան խնայել ինչպիսի թող պատասխաններ Պոլսի ինքնակալ քաղաքագետները, որոնք 61-որդ յօդուածին պղծաբան «փառք ի բարձունս» են կարգում, բայց Հայաստանի վերջը տեսնելով մի բողոք, մի ձայն անգամ չեն հանում, այն ժամանակը մենք կասենք թէ սխալված ենք նոցա մասին...

Պոսիօվի նախնայի, վերին և ներքին Աջարտանի Հայաստան գաղթելու մասին հէնց այս օր հաղորդեցի հեռագրով, «Աջակի» խմբագրութեանը, բայց որովհետև Երևան-Չապայից Ախալցեան չը կայ յարմար երթեւեկութիւն, վասն որոյ գուցէ սուրհմտակի ձեռքով ուղարկած հեռագիրը տեղ չը հասած լինի:

Պոսիօվի նախնայից այս օր չարժիք երեք հարիւր ընտանիք, որ գնում են Խարբեղ, իսկ առհասարակ բոլոր Աջարտանի համար, որ վաթսուս հազար ընտանիք է հաշվում, բնակութեան տեղ նշանակված են Վանի, Գլարբէ-քիլի և Երզրումի նահանգները: Գաղթողները ասում են, որ իրանց ղեկավարող համար Տաճկաց տէրութիւնը արդէն մի առանձին մասնաժողով է ուղարկել Հայաստան, որ այժմ Երզրում պիտի լինի կամ Գլարբէ-քիլ: Չը լինի թէ այդ այն մասնաժողովն է որի անունը դրած է «Հայաստանի բարեկարգութեան» համար ուղարկված մասնաժողով: Թող բացատրեն չուտով Ա. Պոլսից:

Գրիգոր Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Մայիսի 27-ին այստեղից գնացող ծանր փոստից կտրել է մի փոստային պարկ, որի մէջ եղել է 5078 ր. 86 կ.: Պարկի բացակայութիւնը նկատվել է Շուշուց երեք վերստ հեռավորութեամբ: Քննութիւնը սկսված է: Պարկը գտնվել է, միայն նրա մէջ 20 բուլղուց աւելի չը կարոյ»

Մեզ հաղորդում են ՇՈՒՇՈՒՑ, որ առատ անձրևների պատճառով գետերը մեծացել են: Թաւթար գետի մէջ մարդիկ են խեղդել:

Մեզ հաղորդում են ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ, որ այստեղի ուսուցչական խումբը խնդրել է տեղական փոխադրվող հանգուցեալ Ստեփաննոս Նազարեանի հոգեհանգիստը կատարել, իսկ փոխադրող մերժել է նրանց խնդրելը: Յոյս ունենք, որ Ալեքսանդրապոլի հասարակութիւնը ձայն կը բարձրացնէ և բացատրութիւն կը պահանջէ փոխադրողից: Վատ չէր լինի, եթէ մի քանի ալեքսանդրապոլցի առաջաւոր անձինք մի մասնաւոր

ժողով կազմէին, ուր յիշեցնելով հասարակութեանը հանգուցեալ Նազարեանի ազգին նուիրած ծառայութիւնները, այդպիսով յարգէին հանգուցեալի յիշատակը: Մի և նոյն խորհուրդ ենք տալիս և դաւառական միւս քաղաքների հայ բնակիչներին: Հանգուցեալ Նազարեանը եկեղեցուց դուրս գործեց, ուրեմն նրա յիշատակն էլ պէտք է պատել եկեղեցուց դուրս:

Մեզ հաղորդում են ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ, որ մայիսի 28-ին մի քանի թուրքեր մի կառք (ֆայետոն) են վարձել Շ...գիւղը գնալու համար: Զանապարհին նոքա պահանք են 16 տարեկան կառապանին, վերջին ևս իրանց հետ կառքի ձիաներից մէկը և անհետացել են:

ԱՍՏԻՍԱՆԻՑ մեզ գրում են: «Այստեղ Յովսէփ աւագ քահանայ Բռնեւթեանցը, ստորագրութիւն է բացել յօգուտ «Արարատեան ընկերութեան». մի չաբաթվա ընթացքում ժողովեց մինչև հինգ հարիւր բուլղ (500). ստորագրութիւնը գեւո շարունակվում է և բաւական յաջող թէպէտ ու զարկեց աստրախանցիների մէջ այս համակրութիւնը դէպի իրանց հեռաւոր եղբայրները, բայց պէտք է ասել որ աւելի առատ են նուիրում: Այս քանի օրը սիրողները մտադիր են հայերէն մի ներկայացում տալ իր ժամանակին կաշխատեմ հաղորդել ձեռք թեմական ուսումնարանը շատ վատ դրութեան մէջ է և հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, փակվելու է: Սրա մասին ուրիշ անգամ կը հաղորդեմ»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Ահաւասիկ անգլաֆիզանական հաշտութեան դաշնագի կարճաժամ բովանդակութիւնը:

Առաջին յօդուածը նուիրված է հաշտութիւն կապող երկու կողմերի էլ բարեկամական և խաղաղասիրական յարաբերութիւններին:

Երկրորդ յօդուածը թողութիւն է շնորհում էմիրի բոլոր այն հպատակներին, որոնք մասնակից են եղել անգլիացոց դէմ եղած բոլոր թշնամական գործերին:

Երրորդ յօդուածի հիման վրա Աֆգանիստանի արտաքին գործերը կարգադրութիւն

պէտք է ստանան Անգլիայի խորհրդով, որը հարկ եղած ժամանակ, պէտք է պաշտպանէ էմիրին բոլոր օտար յարձակումներէրից:

Չորրորդ յօդուածի գործութեամբ մի մշտական մինիստր, որը շընապատված կը լինի մի գործը գնդով, և հարկաւոր եղած ժամանակ իրաւունք կունենայ անգլիական զործակատարներ ուղարկել աֆգանական սահմանների վրա, Կարուշում ներկայացուցիչ կը լինի Անգլիայի: Էմիրին էլ իրաւունք է տրվում Հնդկաստանում իր ներկայացուցիչներն ունենալ:

Հինգերորդ յօդուածն ասում է, որ էմիրը երաշխաւոր պէտք է լինի Աֆգանիստանում անգլիական զործակատարների հանդուստութեան ու յարգանքին:

Առևտրական յարաբերութիւնները կախված են առանձին պայմաններից, որոնք կը կատարվեն երկու կողմերի էլ հաւասարապէս համաձայնութեանց, և որը պէտք է լինի միայն մի-մի տարի միջոցով:

Կարուշի և Հնդկաստանի մէջ Կուրումի հովիտով հեռադրական յարաբերութիւններ պէտք է սկսվեն:

Այն հոդերը, որոնք ներկայումս գրաւած են անգլիական զօրքերով, պէտք է վերադարձվեն էմիրին, բացի մի քանի հովիտներից, որոնց Անգլիան խոստանում է վերադարձնել այն ժամանակ, երբ նա բոլորովին կը ծածկէ իր պատերազմական ծախսերը:

Անգլիական կառավարութիւնը իշխանութիւն պէտք է ունենայ Բիբեր և Մեխնէ կրճերի վրա, ինչպէս և այն ազատ ցեղերի վրա, որոնք գտնվում են այս կրճերի և սահմանադրութեան վրա: Էմիրը պէտք է տարիական որոշեալ քանակութեամբ մի սուբսիդիա ստանայ, որպէս զի հաստատութեամբ կատարէ դաշնագրի կանոնները:

Մի խառն յանձնաժողով վերջնական որոշումն կը տայ անգլիական և աֆգանական սահմանադրութեան:

Աֆգանիստանի պատերազմը յաջող էլք ունենալուց յետոյ էլ անգլիացիք դեռ չը կարողացան մի ազատ շունչ քաշել: Մինչև այժմ մի և նոյնը պատահել է Ամերիկայում:

Անգլիական զաղթական պերուացիները ծանր կերպով պատերազմ են մղում Չիլիի պետութեան դէմ:

Այս վերջերս պերուացիները ուժակոծում

վերցրած, կարող է իբրև չափս ծառայել առաջին ատիճանը իմանալու համար:

Գործարանութիւնը ունէ նաև շատ ուրիշ առանձնապատկութիւններ, որոնց մասին դեռ վերջում խօսը կը լինի. անցնենք առ այժմ նոյն իսկ դէպի գործը և տեսնենք ինչու են կայանում նոքա և զանազան ազգեր ինչ մասն ունեն նոցա մէջ:

Ինչո՞ւ են կայանում գործարանական արուեստը. նա կայանում է նորա մէջ, որ բնութեան օր և իցէ բերք, որը անընդունակ է անմիջապէս մարդուս պիտոյնները բաւականացնել, փոխիտել այնպէս, որպէս զի նա ստանայ մարդու համար մի օր և իցէ արժէք: Մեզ հարկաւոր է հազնվել, բայց մենք չենք կարող մեր մարմինը ծածկել բամբակով կամ բրդով, հարկաւոր է ուրեմն հանդերձ պատրաստել գործարանական արուեստը դուրս հանար է: Մեզ հարկաւոր է կերակուր, ցորենի սերմերը չենք կարող անմիջապէս սպառել. նորանից հարկաւոր է հաց պտրտաստել. իսկ դուրս համար հարկաւոր է աղբիւր, հացաբլարոց—դժբա գործարանական արուեստներ են: Մեզ հարկաւոր է դանակ, գրիչ, հարկաւոր են տան դռները համար փականքներ, խոհանոցի համար կաթնամանի և ալյուր, աների համար երկաթեայ ձողեր, մարկանդ ու կանանց համար ժամացույցներ, մատանիներ, սպարանջներ և ալյուր. այդ բոլորի համար հում մետաղները ոչնչի չեն ծառայել, նոցա հարկաւոր է զանազան ձևեր տալ. դուրս համար պիտի գործարանական արուեստներ ունենայ:

Արուեստներ թէպէտ մարդը վաղուց ճանաչում է, բայց նոցա զարկ տալու համար հարկաւոր էր դարձնել նոցա ուժերին զարգացումը տեսաւ միայն մեր դարը. Գործարանական արուեստների այդ մեծ զարկ տուող էր գլխաւորապէս շոգուղիք, որի գիւտի պատ իւր պատկանում է մի անգլիացի:

Վաղու, ինձենք օր ձեռն վատտին: Նաև մի նոր գիտութիւն, քիմիան, կոչված էր արուեստների մէջ մի մեծ դեր խաղալ, տալով մարդուս կարողութիւն զինել և իմանալ բոլոր իրերի բաղադրութիւնները և ճանաչել նոցա որակութիւնները:

Գործարանական մեծ շարժումը սկսեց արուեստների կրակային երկրում: Անգլիայում նոյն իսկ այն ժամանակները, երբ ամբողջ Եւրոպայի տէրութիւնները հիմնովին տալիս ու վրա եղած, վերջին թշուառութեան մէջ իրար կոտորել էին, երբ բոլոր գործունէութիւնը դարձել էր անկարելի, երբ ազգերի կարողութիւնները, երկրի հարստութիւնները փոխանակ մարդու բարօրութեան գործադրելու, պիտի ծառայէին մի միջխարի հակառակորդին և աշխարհակալից ազատվելու. այդ Նապոլէոն առաջինի կատաղի և չնչապառ պատերազմների ժամանակն էր. այն ժամանակը, երբ մարդութեան այդ հրէշը կապել էր բոլոր ծովերը, որպէս զի Անգլիան չը կարողանայ առևտրական յարաբերութիւններ ունենալ այլ ազգերի հետ. դրանով Նապոլէոնը ուզում էր աղքատացնել Անգլիային, որպէս զի սա վերջին թշուառութեան մէջ անձնատուր լինէր նրան: Բայց Անգլիային վիճակված չէր այդ աղետներ օրերը տեսնել և ընկնել անարգելական այդ խորհրդի մէջ: Այնպիսի աշխարհակալ կուտակված երկրի անապատելի հարստութիւնները կարողացան Անգլիային տալ ոչ թէ միայն ինքնուրոյն կենսելի միջոցներ, այլ և օգնել իր ուկով Եւրոպայի այլ տէրութիւններին դեգերել աշխարհակալի անհամար զօրքերի ոյժին և վերջապէս վճռողական բուլղին խորտակել նորա զօրքերը և աղաւթի պղծելով Եւրոպայի օտարազգի ծանր և անօթիպիլ լուծից: Նոյն ժամանակներում էր, որ Անգլիայում սկսեցին գործադրել չոգի մեքենաները, որոնցով պիտի սկսվէր գործարանական արուեստների համար մի նոր չընթաց:

Ինչո՞ւ են կայանում այդ գիւտի օգուտը: Նորա-նում, որ նա մի ոյժ է, որը փոխարինում է թէ կենդանիների և թէ մարդկանց աշխատանքը. նորանում, որ նա նստում է աքաբալիլ արժան, մանաւանդ այն երկիրներում ուր բնակուրի ապրուստը թանգ լինելով, վարձը բարձր է. նորա-նում, որ նորա գործողութիւնը աւելի մշտական է և թուաբանական հաշիւներին ենթարկված, քան թէ մարդն: Նորա արժանութիւնը ինչ է իցէ վճռողական կողմն է:—Բայց արժանութիւնը կախված է վառելիքից. փայտ վառէք, նա թանգ կը նստի, քարածուխ վառէք, նա ձեռք արժան կը նստի. ուրեմն հարցը քարածուխի մէջն է և իսկ, այդ առարկան դառել է այժմ բոլոր լուսաւոր երկիրների հարստութիւններից ամենազինաւորը: Եւ այդ կողմից Անգլիայի հողը ներկայացում է այն աստիճանի մեծ հարստութիւններ, որ ոչ մի երկրի աշխարհիս երևին նորա հետ համեմատվել չէ կարող: Գլխեք տարեկան որքան անուխ է ստանում Անգլիան իր հանքերից. ոչ պակաս և ոչ աւել քան 130 միլիոն տոնն, այսինքն աւելի քան բոլոր այլ երկրների անուխը միասին առած: Միւս կողմից մենք տեսնում ենք, որ Անգլիայում արուեստներից ամենածաղկած գործութեան մէջն են, որովհետև, ունենալով արժան վառելիք, կարողանում է նաև ամենաարժան գործունէութիւնները քարածուխից պատրաստել և լեցնել ամբողջ աշխարհի վաճառանոցները իր արդիւնքներով: Եթէ քարածուխը այդպիսի մեծ դեր է խաղում Եւրոպայի անտեսական կենսելի մէջ, հետաքրքիր է ուրեմն իմանալ, թէ որքան է արդիւնաբերում Եւրոպայի երկրներից իւրաքանչիւրը:—Որպէս նկատեցինք, այդ գործում Անգլիան բռնում է առաջին տեղը: Նայեցէք թէ ինչ պահելի կերպով զարգացել է այդ հանքային ճիւղը. այս դարվա սկզբին, 1801, քարածուխի զատումը (extrac-

(Վը շարունակվի)



էին Ձկնի Պիզաքա և Սօլմարո քաղաքները. այս քաղաքները առաջինը բացի երկաթ թուղթը ուրիշ այնպէս նշանաւոր մնաց չը կրնայ իսկ երկրորդը. սաստիկ ուժեղացած թերեւ թողորովին հրդեհի զոհ գնաց: Ձկնա-ցիք փորձ փորձեցին դուրս փախչել, բայց նրանք յետ մղվեցան. նրանցից մի քանիսը սպանվեցան, մի քանիսն էլ վերաւորվեցան: Այս կռուի միջ պէրուսցիները կողմից միայն 12 հոգի վերաւորվեցան:

Ձկնի գլխաւոր քաղաքի Պիզիկի բնակիչները պատրաստութիւն են տեսնում խմբովին նաւով գաղթել:

Այսպիսի նախկին կառավարիչ պ. Գարնէտ Վօլքէէյ, որը այժմ հարաւային Աֆրիկայի քաղաքական և զինուորական գլխաւոր հրահանար նշանակվեցու, այս վերջին նիստերից մեկում ներկայ էր համայնքների ժողովում հինգ այն միջոցին, երբ իրան հաւատացած յանձնարարութիւնների մասին ջերմ վիճաբանութիւններ էին լինում:

Իրադիրները նրա մասին ասում են, որ նա 1852 թւականի բերմանական պատերազմին յաղթական վերջ տուեց. բացի այդ, նա մասնակցում էր Խրիմի պատերազմին, ուր, նա մինչև Անատոլիոյ առումը պատնէշներից դուրս չեկաւ. սրանից յետոյ, նա մասնակցեց նոյնպէս 1859-ի Հնդկաստանի և 1860-ի Չինաստանի պատերազմներին, ուր մայորութեան աստիճան ստացաւ:

1874 թւին նա պարլամենտի երկու ժողովներից էլ շնորհակալութիւններ ստացաւ այն ծառայութիւնների համար, որ նա արել էր իր հայրենիքին, մի և նոյն տարին իրեն կառավարիչ և հրամանատար Ոսկե եզերքի զօրքերին Աշանտիների դէմ մղված պատերազմի ժամանակ:

Սեր Գարնէտ Վօլքէէյ շուտով կուղևորվի դէպի հարաւային Աֆրիկա իր նոր պաշտօնն ընդունելու:

ԳԵՐՄԱՆԻԱ

Պարլամենտի Համբարձման տօնի արձա-կուրդը միջոց տուեց մի քանի լրագիրներին զանազան շինծու լուրերով յուզուելու գցել ամբոխի մէջ:

Այդ լուրերից մէկը հաղորդում էր, որ իշխան Բիսմարկը առաջարկել է իբր, որ այսուհետև բիւզէտը միշտ երկու տարի ժամանակամիջոցով քուէարկվի: Այսպիսի մի առաջարկութիւն շատ խալի և մի և նոյն ժամանակ բոլորովին նպատակաւորաբար չէր լինի իշխանի ապագայ դիտաւորութիւններին. բացի այդ, այն ժամանակ հարկ կը լինէր փոխել և օրէնսդրական կարգերը, զոնէ վեց տարի ժամանակամիջոցով, իսկ դա շատ հեշտ չէր լինի, որովհետև այն ժամանակ պէտք կը լինէր և նոյն իսկ սահմանադրութեան մէջ էլ (որը առանց այն էլ այս րօպէիս մի հաստատ դրութեան մէջ չէ): Հիմնական փոփոխութիւններ անել: Այդ մի և նոյն լրագիրները մի առանձին խնամքով աւելցնում են, որ այս առաջարկութիւնը ներկայ պարլամենտին չեն յանձնի:

Սեր Գարնէտ այս դատարարին պէտք է վերաբերել և այն լուրը, որ իբր պետական ատենադպիրը մի ծրագիր է կազմում, որի հիման վրա ոսկու մի և նոյն քանակութիւնը կրկնապատիկ արժէք կունենայ, այս լուրը կարօտ է հաստատութեան:

Վերջապէս սաստիկ խօսվում է քաղաքական ամուսնութեան ոչնչացնելու մասին. դա մի այնպիսի փափուկ խնդիր է, որով ամենքն էլ մի առանձին հետաքրքրութեամբ են զբաղվում: Եւ դա շատ հասկանալի է, որովհետև առ մեզնից ամեն մէկս եթէ մեզ վրա փորձով տեսնելու անբաղդութիւնը չենք ունեցել, զոնէ մենք ամենքս էլ ականատես վկայ ենք ձեռք կամ հաղորաւոր բովանդակում կարգա-

ցել ենք այն սարսափելի դրամաները, որոնք հետեւեցին են եղել հին օրէնքի նահապետական բռնաբարութեանը: Նա պէտք է խոտովանած, որ մեր ամուսններից շատ քիչերն է յաջողում բաղդաւոր ու երջանիկ լինել մինչև վերջը: Առհասարակ նկատված է, և դա մի անհրեքելի փաստ է, որ ամուսնական երկնակամարը շատ անհաստատ է: Շատ անգամ բաւական է մի ամենաչնչին կտակած, մի նախանձ, մի անկեղծ անգղուշութիւն, օրինակ—Փաղուհին ինչ սիրուն է,—կամ—Հմայեակը ինչ հարուստ է:—Եւ ահա մի րօպէում քաղցր ու հրաշալի երկնակամարի հորիզոնի վրա սե—սե—ամպեր են նշմարում. գնալով դրանք մեծանում, ու ատուաբանում ու խտանում են, փայլակ ու որոտում ծածկում են բոլոր երկնակամարը. խաւար, կայծակ, շանթ պղտորում են մեր ամուսնիների երեակայական երկինքը. և հին օրէնքը նրանց դատապարտում է միայն այդ անորոշ ու անտանելի դրութեան մէջ: Կարծես մարդիկութեան թշնամի մի աներեղոյ ձեռք վճռել է նրանց յաւիտեական անբաղդութեան դատախազիքը... Եթէ հարցնենք, թէ այդ զոհերն ինչով են մեղաւոր, մեզ կը պատասխանեն—ոչնչով—բայց այնու ամենայնու նրանք դատապարտված են յաւիտեական թշնամու-թեան...

Ազատամիտ Գերմանական քայլ առ քայլ նուաճում է այն հողը, որ իրան սեփականութիւնն է, բայց սուրբ ձեռքին կանգնում են նրա առաջ, և ասում են. «դու իրաւունք չունես այստեղից այն կողմ անցնել»:

Ամուսնութեան փոփոխութեան դէմ կազմված նոր ծրագիրը ստորագրված է Բիսմարկի որդիներից մէկից. այդ ծրագիրը արդէն ներկայացվեցաւ պարլամենտին:

Որովհետև այս ծրագիրը կազմված է անպատճառ Բիսմարկի գլխութեամբ ու հաճութեամբ, ուրեմն սրանից պարզ երևում է, որ իշխանը ակամայ էր օգնում քաղաքական առնչութեան մոցնելուն: Իսկ եթէ դա հաճելի չէր Բիսմարկին, ուրեմն պէտք է եւ թաղրել, կամ աւելի լաւ է ասել, համոզվել, որ Վիլհելմին էլ նոյնպէս հաճելի չէր. ուրեմն ինչն էր ստիպում դրանց այդպէս վարվել:

ՆԱՍՏԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 24 մայիսի

Ներկար ատեն սպանիացիք, մեծ ազդ, իրենց թաւաւոր մը կը փնտռէին. մեք ալ, փոքր ազդ, մեր ազդ-ժողովուրդ ատենապետ մը գտնելու համար փնտռել է շուտով: Օտեան հրաժարական կը տայ ատենապետութեան պաշտօնէ մի նախապէս. որ մատենագրական գործար մ'է. իւր հրաժարականի առթիւ կատէ օգի պարտ է ինձ հրաժարվի. հրաժարականի այդ խօսքն բաւական մեկնութեանց տեղի տուաւ: Մեք արդէն ձեզ դրած էինք թէ Օտեան իբր կառավարութեան անգամ և դիւանապետ այնչափ ազատ չէ իւր շարժմանց մէջ որչափ որ ըլլայ կը պահանջէ իւր հայրենասէր ոգին. թէպէտ և Բ. Գրան հայ պաշտօնեայ մ'է Օտեան, բայց անկախ ընտրվին մ'ունի Գր. նա հեռատես և և ազդասէր, կը զիտէ որ այնպիսի պարագայներ պիտի ներկայանան որ պիտի հարկադրեն զնա կամ հրաժեշտ տալ կամ իւր փափագածին համիմատ չը գործել. վան այնորի լաւագոյն կը համարի այժմէն պարզ երեսփոխան մնալ: Գուցէ երկրորդական նկատումներ և իրենց ազդեցութիւնը ունենան Օտեանի որոշման վրա:

Չենք կարծիք որ Ստեփան-բաշա կամենայ այլ ևս վերադառնալ ատենապետ լինել. նա չորս տարիներու փորձով ցոյց տուաւ թէ շատ կարող է ժողով մը կառավարելու. այժմ խոնջ է. թերեւ կամենայ քիչ մ'ալ իւր պերճախօսութեամբ ազդի սիրտն գրաւել, շատ ախորժակ է Ստեփան-բաշայի ատենաբանութիւններն լսել:

Կը մնայ Սերիլէն, բայց նա արդէն ընտրան գրած էր թէ ատենապետ բառն իրեն համար պիտի չը հնչուի, ապա թէ ոչ երեսփոխանութիւն ալ չընդունի, այլ ժողովականներու շարքին ալ զնա ատենապետ ընտրելու տրամադիր չեն. Սերիլէն լաւ

կը վարէ ժողով մը, սակայն շատ խիստ կերպով. նա գիտէ թէ երեսփոխանական ժողովը ժամերն թանկագին են. ուստի չը ներէր որ ամեն երեսփոխան ուղածին պէս երկար բարակ խօսի, ուսմը առանց սառնելու գիտնալու ատենաբան են: Եթէ Սերիլէնի խոտովութիւնը ժողովի մը սիրելի չէ, մեզ համար պատուական ընտրվին մ'է, որովհետև երեսփոխանական ժողովն աւելի գործ տեսնելու ժամանակ կունենայ: Եթէ այս երեքներէն միսն չուզէ, դեկավարել գերեսփոխանական ժողովն, չենք գիտէր ինչ անել լաւիւրվորութիւն մէջ պիտի լինամք:

Ներկայ շրջանի Բ. նիստը տեղի ունեցաւ մայիս 18-ին. երեսփոխանաց ընտիր խումբ մը կայ. այս գոհունակութիւն պատճառեց: Նիստը կանոնաւոր եղաւ:

Լաւ չեմ գիտեր թէ մինչև որ աստիճան տեղեկութիւն ունիք մեր ազդ. ժողովը ներքին կազմակերպութեան վրա. ըստ ներքին կանոնադրի ժողովն 8 դիւան կընտրէ ձեռնաստութեան դատախազութեան, կապուածոց, համարակալութեան, յարաբերութեան, իրաւասութեան նախաձեռնութեան, խմբագրութեան: Սոյն դիւաններն պաշտօն ունեն որ երբ ժողովը մէջ այնպիսի խնդիրներ կը ծագեն որոց լուծումն անմիջապէս չը տրուի այլ հարկ է յանձնաժողովը մը խրել, փոխանակ յանձնաժողովի այդ դիւաններէն որոյ որ կը պատկանի նորա կերպի:—Իւր մայիս 18-ի նստին մէջ ընդհ. ժողովն այդ դիւաններն ընտրեց: Սոյն ընտրութիւնէ վերջ զբաղեցաւ կարեւոր խնդրով մը. ի վաղուց երկու երեսփոխանաց առաջարկութիւն մը կար որով կը պահանջէին յանձնաժողով մը կարգել որ քննէ թէ ինչ պիտի զանազան հայ քննիչներ որք Զէյթունի մեծ յեղափոխութիւնէ ի վեր Հայաստան իրկուեցան. երկար ատենէ որ այդ առաջարկութիւնը ժողովը սեղանին վրա էր, բայց այժմ լուծում տալու ժամն էր. թէ կառավարութեան կողմէ և թէ ազգի կողմէ Հայաստան իրկուած այժմեան քննիչներն եթէ գիտնան որ ազգ. երեսփոխանական ժողովն իստիւր կը հակէ իրենց ընթացքի վրա, որ նա անապաւնապէս պիտի քննէ և յայտարարէ թէ այդ հայերն մինչև ինչ աստիճան կը պաշտպանեն իրենց երկարը դատը, կարծեմք կը պարտաւորեն ուրիշ կերպ գործել: Այս մտածութիւններն էին որ ազդեցութիւն ունեցան ժողովը պոռուին փոխապետ և Ստեփան-բաշայի առաջարկութեան վրայ յանձնուեցաւ խորհրդարանական միացուն յանձնախմբի որ Մայր-Գիւմիսի հետ միասին քննիչ յանձնաժողովը պաշտօնն ևս ստանձնէ, վասն զի գրեթէ ժողովը մէջ պայտի խնդիրներով զբաղող ձեռնհաս անձինքն արդէն միացուն յանձնաժողովը մէջ են. Ստեփան-բաշա ճարտար կերպով որ հասկցուց թէ քանի ժողովը սրչափ ալ որ պաշտօն ունի նախորդ քննիչներու գործերն քննել, բայց շատ յաւաք պիտի չէրթայ և աւելի ուշադիր պիտի լինի ներկային համար:

Սոյն յանձնաժողովը աշխատութեանց մասնակից և նախագահ է խմբիկեան պրագան, պատրիարքական փոխանորդ. սակայն տակաւին Բ. Գուռը պաշտօնապէս դեռ չը ձանչցաւ. կառավարութեան հետ մեր յարաբերական գործերն երկու վերջ միացած են. մայիս 19-ին Ազգ. վարչութեան կողմէ պատգամաւորութիւն մը Բ. Գուռը դեռ փոխանորդութեան վերաբերեալ խնդրոյ մասին պատասխան մը ընդունելու համար. և նմանը չը տեսնուած անարգանքը կընդունի ազգային այդ պատգամաւորութիւնը որ բարձրատիւնն երկուեցանք կանոններն և չորհրդով աշխարհականներէ կազմուած էր. 4 ժամ կը սպասեն սենեակի մը մէջ, ուր ուրեմն մեծ-վեզիրի խորհրդականը կուգայ և կը հարցնէ թէ ինչ կուզէք, թէ մեծ-վեզիրը պիտի տեսնենք կասնէ—չէք կրնար տեսնել, կը պատասխանէ, այժմ դեռ դրած է.—բայց կասնէ, մեզ խոտա-ցած էր, որ ժամ 3-ին զմեզ պիտի ընդունին—խորհուրդի է նստած, կասէ ուղածիդ ըսէք երթամ հարցնեմ: Խորհրդականը կերթայ և քառուրդ մը վերջ կը վերադառնայ ու կասէ թէ մեծ-վեզիրը և պաշտօնէից խորհուրդը փոխանորդութիւն չեն ձանաչէր.—բայց, կասէ պատգամաւորութիւնը, Պատրիարք իւր պաշտօնը չը կրնար առ այժմ կատարել.—լաւ, կը պատասխանէ, ուրիշ Պատրիարք մը ընտրեցէք.—բայց ազգը ուրիշ Պատրիարք չընդունէր.—միող պատասխան Պատրիարք իւր պաշտօնը չարունակել, կասէ խորհրդականը. պատգամաւորութիւնը կը պահանջէ որ անպատճառ մեծ-վեզիրի հետ տեսնութիւն մը անէ. խորհրդականը կը յաւելցնէ թէ քանի որ զինքն տեսնալ վեզիրի հետ տեսնուելու հարկ մը չը կայ, և զայս ասելով կը ձգէ դուրս կեղէն, և այսպիսի կողպտութեամբ մը կը ձաթէ հայ պատգամաւորութիւնը:

Ալ երեսակայեցէք թէ այս ընդունելութիւնը ինչ տխուր տպաւորութիւն արած է Կ. Պօլսոյ հայ ժողովուրդի վրայ: Թիւրքերը բոլոր իրենց խաղա-խութեանց և նենգութեանց մէջ գէթ քաղաքակա-րական կեղծաւորութիւն մը ունէին, որով զմեզ բա-

ւորովին չէին կոտորեր, այժմ այդ դիւանն ալ վար կառնուն և բռնաբարութեանց հետ լիւր կողպու-թիւն մը կը խառնեն: Կամ ասելու է որ ալ յուսահատած են զմեզ շահելէ և ձեռքներուն եկած վերջին հարուածներն մեզ տալու կը փութան, և կամ քաղաքական զօրաւոր նեցուկ մը ունեն որոյ յենած աներկիւղ իրենց կամքը կուզեն կատարել:

Մայիս 21-ին աստի մեկնեցաւ պ. Պոյաճեան Զովաննէս որոյ պաշտօնն է, ինչպէս ասած եմք, երթալ և ի մօտոյ քննել Տիգրանակերտի կողմերն զայոյ յանձնաժողովը գործերն, կարեւոր հրահանգներ ունի ի գործ դնելու համար:

Պ. Պոյաճեանի հետ մեկնեցաւ Կ. Պօլսէն պ. Պե-տրոս Վասիլեան, անգամ գործադիր ժողովը Ալ-բարատեան ընկերութեան: Պ. Վասիլեան կերթայ ներկայացուցիչ Արարատեան ընկերութեան կողմէ Տարսու (Տէր-սիմ) հոն ընկերութեան յայտագրի համեմատ պիտի հաստատէ Արարատեան վարժա-րաններն, պիտի կարգադրէ ինչ գործեր որ կան և պիտի վերադառնայ: Այս մտովն յաջորդ նստակաւ:

Հայկակ

ԹԻՒՐԿԻԱ

Այլք-փաշան թիւրքաց միւստարներն և Պէրայի յանձնաժողովի գլխաւորներին մնաս բարեաւ ասելուց յետոյ, վերջին անգամ տեսն-վեցաւ սուլթանի հետ, և իր ընտանիքով ու իր կառավարութեան Գարնիլ Հիւնդի քարտուղարի հետ միասին ընթացքով ուղևորվեց դէպի Ֆիլիպպոյ: Նրա ընդունելութեան համար արդէն առաջուց Ֆիլիպպոյում Սոս-լիպինի ներկայութեամբ պատրաստութիւն էին տեսնել, և յոյս կայ, որ Բուսիլայի նոր արտօնութիւն ստացած ժողովուրդը սիրալիք ընդունելութիւն կանէ իր գեներալ նահանգապետին: Միայն երբ գեներալ նահանգապետը սահմանադրուի կը հասնի, նա պէտք է թողնի իր կարմիր զետարի և իր թիւրքական զգեստը, և պէտք է հագնէ ռուս-լիական միլիցիայի գեներալի համազգեստը, և բոլորական գլխարկը, որի վրա բարձրացած է մի ապիտակ փետուր: Բոլորները հայա-ծուր են Ֆէսը և թիւրքաց աստիճանաւորների զգեստը, որովհետև դրանք շատ տխուր մտքեր են յարուցանում բոլորների յիշատա-կի մէջ, և որովհետև դրանք չափազանց շատ են վառ պահում նրանց մաքի մէջ սարկա-կան վիճակի յիշատակը: Նրանք իրանց նոր առաջնորդին ոչ իբրեւ փաշա են ճանաչում, և ոչ իբրեւ մուշիր, այլ նրան կը ճանաչեն իբրեւ իշխան Վօզորիդէս: Բ. Գուռը մի առանձին խաղաղասիրական գիտաւորութեամբ յարմար համարեց անել այս գիշումները իր այս նոր նահանգին, միայն այն պայմանով, որ Բ. Գրան համար Այլք-փաշան միշտ պէտք է համարվի նրա կայսրութեան մո-շիւրն և ի թւում հետեւաբար և նրա յա-րաբերութիւններն էլ կայսրութեան կառա-վարութեան հետ, այդ տխուր տակ պէտք է կատարվեն:

Եւրօպական յանձնաժողովի անդամներից մի քանիսը ուղևորվեցան Ֆիլիպպոյ դեռ Այլք-փաշայից առաջ:

«ՄԵԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳ, 4 յունիսի: Պետական բան-կի 5% տոմսով առաջին շրջանի արժէ 95<sup>1</sup>/<sub>8</sub> ռ., երկրորդ 95<sup>3</sup>/<sub>8</sub> ռ., երրորդ 95 ռ., չորրորդ 95 ռ., ներքին 5% առաջին փուլա-ռութեան տոմսով արժէ 242 ռ., երկրորդ 236 ռ. 50 կ., արևելեան առաջին փուլա-ռութեան տոմսով արժէ 93 ռ., երկրորդ 93 ռ., ոսկի 8 ռ. 46 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 23<sup>3</sup>/<sub>16</sub> պէնս: Տրամադրու-թիւնը թոյլ է:

Խմբագիր-Հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ



